ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3170-Ա « 08 » օգոստոսի 2025թ.

ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻ ՓՈՂՈՑԻ Հ.8/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ, ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Աստղիկ Անջոյանի լ/ա Գեորգի Իսայանի դիմումը՝ Երվանդ Քոչարի փողոցի հ.8/7 հասցեում գտնվող շինության զբաղեցրած հողամասի սահմանները ճշտելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 2008 թվականի դեկտեմբերի 26-ի հ.2622383 վկայականը, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 2022 թվականի հուլիսի 1-ի հ.Կ-01072022-01-0161 որոշումը, գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների /սահմանափակումների/ վերաբերյալ 2022 թվականի մայիսի 23-ի հ.ԱՏ-23052024-01-0844 և 2022 թվականի օգոստոսի 29-ի հ.ԱՏ-29082022-01-0545 տեղեկանքները, Երվանդ Քոչարի փողոցի հ.8/8 հասցեի հետ հատակագծով համադրվող գույքի (ծածկագիր՝ 01-006-0258-0063) սեփականատեր՝ «Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Աշոտ Ներսիսյանի համաձայնագիրը, ինչպես նաև որակավորում ունեցող անձ Գնել Առաքելյանի (վկայական №050) կողմից 2023 թվականի հունիսի 21-ին տրված հողամասի և շինությունների հատակագիծը և եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2025 թվականի հուլիսի 15-ի հ.ՆՂ/13463-2025 գրությունը:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ քննարկվող հասցեում գտնվող շինության զբաղեցրած հողամասի փաստացի մակերեսը կազմում է 112.0քմ՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 2008 թվականի դեկտեմբերի 26-ի հ.2622383 վկայականում ամրագրված 520քմ մակերեսի փոխարեն, իսկ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 2022 թվականի հուլիսի 1-ի հ.Կ-01072022-01-0161 որոշման համաձայն՝ 520.0քմ ընդհանուր վարձակալած հողամասից մի մասը Երևանի քաղաքապետի որոշումներով որպես սեփականություն հատկացվել է տարբեր հասցեներով գույքի սեփականատերերին:

Քննարկվող՝ 112.0քմ մակերեսով հողամասն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ գտնվում է Երևան քաղաքի հողերի տարածագնահատման համաձայնեցված սխեմայի 4-րդ գոտում:

Երևանի քաղաքապետի 2024 թվականի նոյեմբերի 1-ի հ.4225-Ա որոշմամբ՝ Երվանդ Քոչարի փողոցի հ.8 հասցեում գտնվող գույքին տրամադրվել է «Երվանդ Քոչարի փողոց, հ.8/7» հասցեն:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 2024 թվականի հունիսի 26-ի հ.Դ-75348-24, 2024 թվականի դեկտեմբերի 12-ի հ.Դ-153751-24 և 2025 թվականի հուլիսի 30-ի հ.Դ-81716-25 եզրակացությունները.

1. Սահմանել, որ Երվանդ Քոչարի փողոցի հ.8/7 հասցեում գտնվող շինության զբաղեցրած հողամասի սահմանները որոշվում են 112.0քմ մակերեսի համար սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ Երվանդ Քոչարի փողոցի հ.8/7 հասցեում գտնվող 112.0քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը /կատեգորիան/ սահմանել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը /օգտագործման նպատակը/՝ հասարակական կառուցապատման:

3. Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

4. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի և Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246